

ՆԱՆՈՒՆ ՆԱՅԱՍՄԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱՅԱՍՄԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը

**ՆԱՅԱՍՄԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԲԱՆ-
ԿԻ ՄԻՋԵՎ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 7-ԻՆ ԵՎ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵ-
ՐԻ 18-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ՆԱՅԱՍՄԱՆԻ «ՆՅՈՒՄԻՍ-ՆԱՐԱՎ» ՃԱՆԱՊԱՐՆԱՅԻՆ
ՄԻՋԱՆՅՔ» ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒ-
ԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՆԱՅԱՍՄԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՆԱ-
ՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՆԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

27 մայիսի 2014թ.

Նայասրանի Նանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով.
Գ. Նարոյթյունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թովուզյանի,
Ա. Խաչատրյանի, Վ. Նովիաննիսյանի, Ն. Նազարյանի (զեկուցող), Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ՝ Նանրապետության Նախագահի պաշտոնական ներկայա-
ցուցիչ՝ ՆՏ փրանսպորտի եւ կապի նախարարի տեղակալ Ա. Առաքելյանի,

համաձայն Նայասրանի Նանրապետության Սահմանադրության 100-րդ հոդ-
վածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատա-
րանի մասին» Նայասրանի Նանրապետության օրենքի 25, 38 եւ 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Նայասրանի Նանրապե-
տության եւ Եվրոպական ներդրումային բանկի միջեւ 2013 թվականի նոյեմբերի 7-ին
եւ 2013 թվականի նոյեմբերի 18-ին ստորագրված՝ «Նայասրանի «Նյուսիս-հարավ»
ճանապարհային միջանցք» ֆինանսական պայմանագրում ամրագրված պարտավո-
րությունների՝ Նայասրանի Նանրապետության Սահմանադրությանը համապատաս-
խանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Նանրապետության Նախագահի՝ 2014 թվականի
ապրիլի 29-ին ՆՏ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Նանրապետության Նախագահի ներկայացուցչի գրավոր բացատրությունը եւ լսելով նրա պարզաբանումները, հերագոյրելով պայմանագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Նայասպանի Նանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց** .

1. «Նայասպանի «Նյուսիս-հարավ» ճանապարհային միջանցք» ֆինանսական պայմանագիրն ստորագրվել է Նայասպանի Նանրապետության եւ Եվրոպական ներդրումային բանկի (այսուհետ՝ Բանկ) միջեւ 2013թ. նոյեմբերի 7-ին եւ 2013թ. նոյեմբերի 18-ին՝ Լյուքսեմբուրգում:

Պայմանագրի նպատակն է Նայասպանի Նանրապետությանը տրամադրել 60.000.000 եվրո գումարի չափով վարկ՝ «Նայասպանի «Նյուսիս-հարավ» ճանապարհային միջանցք» ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) ֆինանսավորելու նպատակով: Ծրագրով նախատեսվում է բարեկարգել Երեւան-Բավրա միջանցքի հյուսիսային մասի մոտ 145 կմ երկարությամբ ճանապարհահատվածը՝ ապահովելով բոլոր տեխնիկական ենթակառուցվածքների արդիականացումը: Այն Նայասպանի Նյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի բարեկարգման եւ վերակառուցման ընդհանուր ծրագրի բաղադրիչն է:

Պայմանագրի անբաժան մաս են կազմում Դեկլարարիվ դրույթները, Նավելվածը եւ թվով չորս Առդիրներ:

2. Պայմանագրով Նայասպանի Նանրապետությունն ստանձնում է հետեւյալ հիմնական պարտավորությունները.

2.1. ոչ ուշ, քան վարկի հարկացման սահմանված ամսաթվից 15 օր առաջ Բանկին գրավոր տեղեկացնել Նարկացման հաշվի մասին (IBAN ծածկագրով կամ տեղական բանկային պրակտիկայում ընդունված համապարասխան ձեւաչափով).

2.2. առաջին տրանշի հարկացման համար սահմանված ամսաթվից առաջ 5-րդ աշխատանքային օրը կամ դրանից շուրջ Բանկին ներկայացնել՝

- ՏՏ արդարադատության նախարարության կողմից տրամադրված՝ անգլերենով կազմված իրավական եզրակացություն (այն հիմնավորող կից փաստաթղթերով) Նայասպանի Նանրապետության կողմից ֆինանսական պայմանագրի պահանջները պարշաճ կերպով կատարելու եւ դրա վավերականության, կատարման ենթակա լինելու եւ պարտադիր բնույթ ունենալու մասին,

- հաստատում Պայմանագրի եւ դրա Ծրագրի իրականացմանն առնչվող բոլոր անհրաժեշտ թույլտվությունների ստացման մասին,

- հաստատում այն մասին, որ Նայասպանի Նանրապետությունը կօգտվի այնպիսի խորհրդարանների ծառայություններից, որոնց որակավորումը, մասնագիտական փորձը եւ փեխնիկական առաջադրանքները համապատասխանում են Բանկի պահանջներին,

- Պայմանագրի 1.08 հոդվածին համապատասխան գնահատման վճարի ամբողջական կատարման հաստատում,

- գրավոր հաստատում Եվրոպական միության շրջակա միջավայրի մասին հրահանգի դրույթների կատարման մասին,

- կառուցապարման եւ բնապահպանական թույլտվությունները 1-ին եւ 2-րդ փրանշների համար,

- Նող ձեռք բերելու եւ վերաբնակեցնելու ծրագրի հաստատված պարճերը 2-րդ եւ 3-րդ փրանշներից յուրաքանչյուրի համար,

- Անկախ վերստուգման պարճերը.

2.3. երկրորդ փրանշի հարկացման համար սահմանված ամսաթվից առաջ հինգերորդ աշխատանքային օրը կամ դրանից առաջ Բանկին ներկայացնել՝

- 3-րդ փրանշի համար բնապահպանական եւ կառուցապարման թույլտվությունները,

- հաստատում, որ 3-րդ փրանշով նախատեսված աշխատանքների վերաբերյալ փեղեկավորություն է փեղադրվել Եվրոպական միության պաշտոնական փեղեկագրում,

- հաստատում, որ անհրաժեշտ բոլոր ապահովագրական վկայագրերը ձեռք են բերվել Պայմանագրի 6.05. հոդվածին համապատասխան.

2.4. բոլոր փրանշների հարկացման համար Բանկին ներկայացնել՝

- Պայմանագրի Դ առդիրում նշված ձեւին համապատասխան հավաստագիր,

- Նարկացման ընդունումն ստորագրելու լիազորություն ունեցող անձի (անձանց)՝ այդպիսի լիազորություն ունենալու փաստի հաստատումը, ինչպես նաեւ այդ անձի (անձանց) ստորագրությունների նմուշները,

- բացառությամբ առաջին փրանշի հարկացման դեպքի, հաստատումներ Եվրոպական միության Ֆինանսավորման համաձայնագրի եւ Իրականացման համաձայնագրի պարշաճ ձեւով կատարման մասին, Եվրոպական միության Ֆինանսավորման համաձայնագրին համապատասխան մասհանումների իրավունք ունենալու մասին, Եվրոպական միության Ֆինանսական համաձայնագրի եւ ՆՆԳ

փաստաթղթերի շարունակական գործողության, վավերականության եւ կատարման ենթակա լինելու մասին,

- հաստատում Եվրոպական Նանձնաժողովի երաշխիքի վավերականության, պարտադիր ուժի եւ կատարման ենթակա լինելու մասին,

- հաստատում Շրջանակային համաձայնագրի վավերականության, պարտադիր ուժի եւ կատարման ենթակա լինելու մասին,

- թույլտվության կամ որեւէ այլ փաստաթղթի, եզրակացության կամ հավաստիացման պատճենը՝ Բանկի կողմից այդ մասին ծանուցված լինելու դեպքում,

- Նաստատում, որ 1-ին տրանշի, 2-րդ տրանշի եւ 3-րդ տրանշի համար ֆինանսավորումը Նայաստանի Նանրապետությունը համաձայնեցրել է Ասիական զարգացման բանկի հետ՝ ըստ այդ բանկի Վարկային փաստաթղթերի,

- հաստատում Ծրագրի կապակցությամբ ձեռք բերվելիք հողատարածքների ձեռքբերման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների առկայության մասին,

- գնումների ծրագիրը.

2.5. վճարել հետաձգված հարկացման գումարի հիման վրա հաշվարկված հետաձգման փոխհատուցում՝ իր հարցման հիման վրա ցանկացած ընդունված տրանշի հարկացումը Բանկի կողմից մասամբ կամ ամբողջությամբ հետաձգելու դեպքում, ինչպես նաեւ սահմանված ամսաթվի եւ Նարկացման սահմանված ամսաթվի դրությամբ Նայաստանի Նանրապետության կողմից պայմանագրի 1.04 հոդվածում սահմանված պայմաններից որեւէ մեկի չկատարման դեպքում.

2.6. կանխավճարի փոխհատուցման դեպքի կամ պարտավորությունները չկատարելու դեպքի առաջացման պատճառով Բանկի կողմից ընդունված տրանշի կասեցման դեպքում վճարել հետաձգման դիմաց փոխհատուցում, որը հաշվարկվում է կասեցված հարկացման գումարի հիման վրա.

2.7. փոխհատուցում կատարել բանկին պայմանագրի 4.02.Բ հոդվածով սահմանված կարգով, եթե չեղյալ է հայտարարում ֆիքսված տոկոսադրույքով ընդունված տրանշը.

2.8. Բանկին վճարել կանխավճարի փոխհատուցում, եթե Բանկը չեղյալ է հայտարարում ֆիքսված տոկոսադրույքով ընդունված տրանշը, կանխավճարի փոխհատուցման դեպքի կամ պայմանագրի 1.05.Բ հոդվածում նշված իրավիճակի պատճառով.

2.9. Բանկին փոխհատուցել Պայմանագրի 10.03. հոդվածով սահմանված կարգով, եթե Բանկը չեղյալ է հայտարարում Ընդունված տրանշը՝ պարտավորությունները չկատարելու դեպքի առաջացման պատճառով.

2.10. վճարել Բանկին 50.000 եվրո գնահատման վճար՝ Ծրագրի հետ կապված՝ Բանկի կողմից իրականացված գնահատման դիմաց.

2.11. վճարել եվրոյով յուրաքանչյուր փրանշի փոկոսները, հետվճարումները եւ այլ գանձումները՝ Պայմանագրով սահմանված պայմաններին, ժամկետներին եւ կարգին համապատասխան.

2.12. կատարել փոկոսի վճարումը մասերով Ֆիքսված փոկոսադրույքով փրանշի չմարված հաշվեկշռի մասով՝ ֆիքսված փոկոսադրույքով, կիսամյակային կտրվածքով՝ հարկացման առաջարկում նշված համապատասխան վճարման ամսաթվերին՝ սկսած փրանշի հարկացման օրվան հաջորդող առաջին վճարման ամսաթվից.

2.13. կատարել փոկոսի վճարումը մասերով լողացող փոկոսադրույքով յուրաքանչյուր փրանշի չմարված հաշվեկշռի մասով՝ լողացող փոկոսադրույքով, կիսամյակային կտրվածքով՝ հարկացման առաջարկում նշված համապատասխան վճարման ամսաթվերին՝ սկսած փրանշի հարկացման օրվան հաջորդող առաջին վճարման ամսաթվից.

2.14. Բանկի պահանջագրի համաձայն վճարել փոկոսներ՝ իր կողմից վճարվելիք ցանկացած ժամկետանց գումարի դիմաց՝ վճարման ենթակա ամսաթվից մինչեւ վճարման ամսաթիվը՝ Պայմանագրով սահմանված փարեկան փոկոսադրույքների համաձայն.

2.15. մասերով հետ վճարել Բանկին յուրաքանչյուր փրանշը՝ հարկացման առաջարկում սահմանված վճարման ամսաթվերին եւ մարման աղյուսակի պայմաններին համապատասխան.

2.16. Բանկի կողմից սահմանված ամսաթվին վճարել Վարկի կանխավճար՝ կուտակված փոկոսի եւ սույն Պայմանագրով նախատեսված կուտակված կամ չվճարված բոլոր մյուս գումարների հետ միասին, եթե Բանկը չեղյալ է համարել Վարկի չհարկացված մասը՝ օրենքի փոփոխության դեպք առաջանալու կամ այդպիսի դեպք առաջանալու հավանականության հիմքով.

2.17. օգտագործել վարկի ներքո իր կողմից փոխառված գումարների միջոցները Ծրագրի կատարման նպատակով եւ երաշխավորել, որ Պայմանագրի 5-րդ Դեկլարաբիլ դրույթում թվարկված՝ իրեն հասանելի մյուս միջոցները պահանջված չափով ծախսվում են Ծրագրի ֆինանսավորման նպատակով.

2.18. իրականացնել Ծրագիրը համաձայն Տեխնիկական նկարագրի.

2.19. ձեռք բերել միջոցներ՝ Ծրագրի հավելյալ ծախսերը վճարելու համար, եթե Ծրագրի հետ կապված ընդհանուր ծախսը գերազանցում է 5-րդ դեկլարապիվ դրույթում նշված գումարի չափը.

2.20. իրականացնել փեխնիկական սպասարկում, վերանորոգում, անցկացնել գնումներ եւ թարմացնել Ծրագրի մաս կազմող սեփականությունը.

2.21. ապահովագրել Ծրագրի մաս կազմող բոլոր աշխատանքները եւ սեփականությունն առաջնակարգ ապահովագրական ընկերությունների միջոցով.

2.22. իրականացնել Ծրագիրը՝ բնապահպանական իրավունքին համապատասխան, ձեռք բերել եւ պահպանել պահանջվող բնապահպանական հասարկումները Ծրագրի համար.

2.23. իրականացնել եւ կյանքի կոչել Ծրագիրը՝ Եվրոպական միության օրենքի համապատասխան չափանիշների համաձայն.

2.24. Բանկի համար ընդունելի ձեռով եւ բովանդակությամբ մշակել ապահովման ծրագիր՝ վերջինիս մաս կազմող յուրաքանչյուր ճանապարհահարվածի համար.

2.25. ֆինանսավորել եւ համապատասխան միջոցներով ապահովել Նոդի ձեռքբերման եւ վերաբնակեցման ծրագրերի իրականացումը.

2.26. նախատեսել Եվրոպական ներդրումային բանկի Վարկային հաշիվ՝ Բանկից վարկի հարկացումներ ստանալու նպատակով.

2.27. Բանկին տրամադրել առաջին երկու տարվա կտրվածքով գործողությունների մանրամասն ծրագիր՝ ոչ ուշ, քան մինչեւ 2014թ. դեկտեմբերի 31-ը.

2.28. ապահովել, որ իր վճարման պարտավորությունները պայմանագրի շրջանակներում դասակարգվեն բոլոր ներկա եւ ապագա՝ չապահովված եւ չստորակարգված այլ պարտավորությունների վճարման իրավունքին հավասար առաջնահերթությամբ՝ իր ցանկացած պարտքային փաստաթղթի ներքո.

2.29. անմիջապես Բանկին տեղյակ պահել այլ վարկատուի հետ միջնաժամկետ կամ երկարաժամկետ ֆինանսավորման պայմանագիր կնքելու մասին, որը պարունակում է վարկանիշի կորստի վերաբերյալ դրույթ կամ պարտավորությունների մարման հավասար առաջնահերթության կամ պարտավորությունների խաչաձեւ չկատարման համաձայնություն.

2.30. Բանկին տրամադրել տեղեկատվություն Ա.2. առդիրում նշված բովանդակությամբ, ձեռով եւ ժամանակին.

2.31. Բանկին տրամադրել տեղեկատվություն Ծրագրի կամ Ծրագրի համար ֆինանսավորման, գնումների, իրականացման, շրջակա միջավայրի վրա հնարավոր

ազդեցության վերաբերյալ կամ լրացուցիչ փաստաթուղթ, որը Բանկը կարող է հիմնավոր կերպով պահանջել ողջամիտ ժամանակահատվածում.

2.32. անհապաղ ներկայացնել Բանկին Ծրագրի ցանկացած էական փոփոխություն՝ հաստատելու համար.

2.33. Բանկին անհապաղ տեղեկացնել որեւէ երրորդ կողմի նախաձեռնած ցանկացած գործողության, բողոքի կամ առարկության վերաբերյալ, ցանկացած փաստի կամ դեպքի մասին, որոնք կարող են էապես վնասել Ծրագրի կատարման ու իրականացման պայմանները, Ծրագրին առնչվող հանցագործությունների մասով իրական մեղադրանքի, դժգոհության կամ տեղեկատվության վերաբերյալ, բնապահպանական կիրառելի իրավունքին որեւէ անհամապատասխանության մասին, բնապահպանական հաստատման ցանկացած կասեցման, չեղյալ հայտարարման կամ փոփոխման մասին.

2.34. փարեկան կտրվածքով փրամադրել Բանկին իր փարեկան բյուջեի աղյուսակային ամփոփագիրը՝ փարեկան բյուջեի հաստատումից հետո մեկ ամսվա ընթացքում.

2.35. Բանկի ողջամիտ պահանջի դեպքում քայլեր ձեռնարկել հետաքննելու եւ /կամ/ դադարեցնելու համար որեւէ ենթադրյալ կամ կասկածվող գործողություն, որն ունի Պայմանագրի 6.12. հոդվածում նկարագրված բնույթը.

2.36. Բանկին տեղեկացնել այն միջոցների մասին, որոնք ձեռնարկվել են որեւէ կորստի համար պատասխանատու անձանց գործողությունների հետեւանքով պարճառված վնասի հատուցում ստանալու ուղղությամբ.

2.37. օժանդակել ցանկացած հետաքննության, որը կարող է իրականացնել Բանկը նախորդ կետում նշված գործողությունների առնչությամբ.

2.38. վճարել բոլոր հարկերը, փուրքերը, վճարները եւ այլ ցանկացած բնույթի պարտադիր վճար, ներառյալ պետական փուրքը եւ գրանցման վճարը, որոնք ծագում են Պայմանագրի կամ այլ համապատասխան փաստաթղթի կատարումից կամ իրականացումից.

2.39. վճարել ամբողջ հիմնական գումարը, փոկոսը, փոխհատուցման գումարը եւ Պայմանագրի ներքո վճարման ենթակա մյուս գումարները՝ առանց որեւէ ազգային կամ տեղական հարկման նվազեցման.

2.40. կատարել բոլոր գանձումների եւ այլ ծախսերի վճարումը, այդ թվում՝ մասնագիտական, բանկային կամ փարադրամի փոխանակման հետ կապված գանձումները, որոնք առաջանում են Պայմանագրի կամ այլ համապատասխան փաստաթղթի փոփոխման, լրացման, նախապարտադրման, կատարման,

իրականացման եւ դադարեցման կամ Պայմանագրից կամ այլ համապարասխան փաստաթղթից հրաժարման, ինչպես նաեւ Վարկի համար որեւէ երաշխիքի փոփոխման, սրեղծման, կառավարման եւ իրականացման ուղղությամբ.

2.41. վճարել Բանկին ցանկացած գումար կամ ծախս, որոնք առաջացել են կամ Բանկը կրել է որեւէ օրենքի կամ կանոնակարգի ներդրման կամ փոփոխության արդյունքում կամ ցանկացած օրենքի կամ կանոնակարգի փոփոխության արդյունքում.

2.42. հատուցել եւ Բանկին գերծ պահել որեւէ կորստից, որը հետեւանք է Նայասարանի Նանրապետության կողմից կատարված որեւէ վճարման կամ մասնակի մարման, որը Կրեդիտ է ունեցել Պայմանագրով հստակ սահմանված ձեւից փարբերվող ձեւով.

2.43. Բանկի կողմից գրավոր պահանջ ներկայացվելու դեպքում անմիջապես հետ վճարել Վարկն ամբողջությամբ կամ մասամբ՝ Պայմանագրի ներքո կուտակված փոկոսների կամ այլ չվճարված գումարների հետ միասին, համաձայն Պայմանագրի 10.01.Ա հոդվածով սահմանված դրույթների:

3. Անդրադառնալով ՆՏ ճանապարհային ցանցի բարելավմանն ու պահպանմանն ուղղված միջազգային ներդրումային ծրագրերի իրականացման եւ այդ բնագավառում ՆՏ սրանձնած պարտավորությունների կատարման պրակտիկային՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ուսումնասիրվել է Նայասարանի Նանրապետության եւ Ասիական զարգացման բանկի միջեւ 2009 թվականի սեպտեմբերի 15-ին եւ 2011 թվականի մայիսի 30-ին կնքված ներդրումային ծրագրի Տրանշ 1-ի եւ Տրանշ 2-ի իրականացման վարկային համաձայնագրով ՆՏ սրանձնած պարտավորությունների կատարման ընթացքը, մասնավորապես՝ «Նյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրագործման շրջանակներում խորհրդարվական ծառայությունների մատուցման գործընթացի օրինականության ու արդյունավետության նկատմամբ իրականացված վերահսկողության արդյունքների վերաբերյալ» ՆՏ վերահսկիչ պալատի խորհրդի 2013 թվականի հունիսի 1-ի թիվ 11/1 որոշմամբ հաստատված ընթացիկ հաշվետվությունը: Սահմանադրական դատարանը գտնում է, որ քննության առարկա Պայմանագրի կատարման շրջանակներում հիշյալ փաստաթղթում ՆՏ վերահսկիչ պալատի կողմից բացահայտված թերությունների ու բացթողումների բացառումը, ինչպես նաեւ արված եզրակացությունների ու առաջարկությունների կենսագործումը վերոհիշյալ Պայմանագրով սրանձնած ՆՏ պարտավորությունների արդյունավետ կատարման, հետեւաբար՝ նաեւ ՆՏ

Սահմանադրությամբ պետության առջև դրված սահմանադրաիրավական խնդիրների իրագործման երաշխիքներ են:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Նայասարանի Նանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին և չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Նայասարանի Նանրապետության օրենքի 63, 64 և 72-րդ հոդվածներով, Նայասարանի Նանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

1. Նայասարանի Նանրապետության և Եվրոպական ներդրումային բանկի միջև 2013 թվականի նոյեմբերի 7-ին և 2013 թվականի նոյեմբերի 18-ին ստորագրված՝ «Նայասարանի «Նյուսիս-հարավ» ճանապարհային միջանցք» ֆինանսական պայմանագրում ամրագրված պարտավորությունները համապարասխանում են Նայասարանի Նանրապետության Սահմանադրությանը:

2. Նայասարանի Նանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՎՈՂ

Գ. ՆԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

27 մայիսի 2014 թվականի
ՍԴՈ-1151